Գործիքակազմ աջակիցների համար

Կիսվեք էպիլեպսիայի՝ Ձեր անցած ճանապարհով էպիլեպսիայի միջազգային օրը

Էպիլեպսիայի միջազգային օրն առանցքային նախաձեռնություն է, որը էպիլեպսիայի համայնքը օգտագործելու է էպիլեպսիայի մասին իրազեկվածությունը բարձրացնելու և Առողջապահության Համաշխարհային Կազմակերպության [ԱՀԿ] Էպիլեպսիայի և այլ նյարդաբանական խանգարումների 10-ամյա միջոլորտային գլոբալ գործողությունների պլանը (2022-2031)՝ ՄԳԳՊ (IGAP) իրականացնելուն նպաստելու համար:

ՄԳԳՊ (IGAP) տասնամյա ճանապարհային քարտեզ է, որն ունի հատուկ ռազմավարական նպատակ՝ ամրապնդելու էպիլեպսիայի նկատմամբ հանրային առողջապահության մոտեցումները: Այն ունի երկու հիմնական թիրախներ, որոնք ուղղված են էպիլեպսիա ունեցող անձանց բուժմանը և ամբողջ աշխարհում հասարակության մեջ վերջիններիս ընդգրկման հիմնական բացերը լրացնելուն:

- Համաշխարհային թիրախ 5.1. մինչև 2031 թվականը պետությունները պետք է 50%-ով ավելացնեն էպիլեպսիայի ծառայությունների ծածկույթը՝ 2021 թվականի ընթացիկ ծածկույթի համեմատ:
- Համաշխարհային թիրախ 5.2. պետությունների 80%-ը մինչև 2031 թվականը պետք է մշակեն կամ թարմացնեն իրենց օրենսդրությունը՝ խթանելու և պաշտպանելու էպիլեպսիա ունեցող մարդկանց իրավունքները:

Այս գլոբալ թիրախներին հասնելու ճանապարհին հիմնական խոչընդոտներ են հանդիսանում առողջապահական գրագիտության ցածր մակարդակը և էպիլեպսիայի մասին բազմաթիվ թյուր պատկերացումները:

Գիտելիքի պակասը բերում է սոցիալական խարանի և մերժման ու հանգեցնում է էպիլեպսիա ունեցող անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքի՝ հասարակության բոլոր մակարդակներում, օրինակ՝ աշխատավայրում, դպրոցում կամ համայնքում:

Գիտելիքների պակասը կարող է հանգեցնել նաև պատշաճ բուժում ստանալու դժվարությունների՝ սխալ ախտորոշման, բուժման ոչ ճիշտ ընտրության, էպիլեպսիա ունեցող և նրանց խնամող անձանց ոչ պատշաճ խնամք և աջակցության տրամադրելու հետևանքով: Փաստ է, որ էպիլեպսիայի շուրջ ձևավորված խարանի պատճառով աշխարհի շատ մասերում էպիլեպսիա ունեցող անձինք չեն դիմում բուժօգնության:

Ի հավելումն դրա, գիտելիքի պակասը խոչընդոտում է քաղաքականություն մշակողների և որոշում կայացնողների կողմից առաջնահերթություններ առանձնացնելուն և ռեսուրսների բաշխում իրականացնելուն, ինչպես նաև էպիլեպսիայի բեռը թեթևացնելուն ուղղված հատուկ քաղաքականության և ծրագրերի իրականացման անհրաժեշտության գիտակցմանը:

Հետևաբար, այս #EpilepsyDay-ին ընդառաջ, մենք ցանկանում ենք բարելավել էպիլեպսիայի մասին գիտելիքների մակարդակը հասարակության բոլոր շերտերում՝ խնդրելով էպիլեպսիա ունեցող անձանց և նրանց, ովքեր հոգ են տանում վերջիններիս մասին, կիսվել Էպիլեպսիայի՝ իրենց անցած ճանապարհով:

#MyEpilepsyJourney

Անկախ նրանից՝ դուք էպիլեպսիա ունեցող անձ եք, խնամող, առողջապահական կամ սոցիալական խնամքի մասնագետ, հետազոտող, ոլորտի ներկայացուցիչ, քաղաքականություն մշակող կամ որևէ այլ անձ, ով հետաքրքրված է էպիլեպսիայով՝ պատմե՛ք մեզ ավելին այն մասին, թե ինչպես է սկսվել էպիլեպսիայի՝ Ձեր ճանապարհը, այդ ճանապարհի որ հատվածում եք այժմ և որտեղ կցանկանայիք լինել:

Յուրաքանչյուր ճանապարհ կարևոր է: Կիսեք էպիլեպսիայի՝ Ձեր անցած ճանապարհով, որպեսզի ուժեղացնենք մեր հավաքական ձայնը այս #EpilepsyDay-ին:

Խնդրում ենք օգտագործել այս ձևը՝ Ձեր ճանապարհի պատմությունը ներկայացնելու համար:

Նշում. *Գրառումները պետք է ներկայացվեն մինչև հինգշաբթի, 2024 թվականի փետրվարի 1-ը: Կիսվեք ձեր պատմությամբ ցանկացած պահի մինչև փակման ամսաթիվը, քանի որ ստանալուց հետո մենք հրապարակելու ենք պատմությունները:*

Վիրտուալ արվեստի ցուցահանդես

Մեր վիրտուալ արվեստի ցուցահանդեսը վերադառնում է նշելու 2024 թվականի Էպիլեպսիայի միջազգային օրը:

Այս տարվա թեման է՝ «Էպիլեպսիայի իմ ճանապարհի կարևոր իրադարձությունները»:

Մենք կընդունենք նկարներ կամ գծանկարներ, լուսանկարներ կամ ֆոտոմոնտաժ, խեցեգործություն կամ քանդակ, հուլունքագործություն կամ ասեղնագործություն: Ներկայացված նյութերը կցուցադրվեն Էպիլեպսիայի միջազգային օրվա կայքում, Էպիլեպսիայի միջազգային բյուրոյի (IBE) և Էպիլեպսիայի դեմ պայքարի միջազգային լիգայի (ILAE) սոցիալական մեդիա ալիքներում:

Մուտքի ձև

Փակման ամսաթիվը. հինգշաբթի, փետրվարի 1

Կիսվե՛ք Ձեր միջոցառումով մեզ հետ

Եթե դուք պլանավորում եք միջոցառում նվիրված Էպիլեպսիայի միջազգային օրվան, խնդրում ենք կիսվել մանրամասներով մեզ հետ այստեղ:

Միջոցառումները կցուցադրվեն Էպիլեպսիայի միջազգային օրվա պաշտոնական

կայքում և կարող են ներառվել նաև Էպիլեպսիայի միջազգային օրվա տարեկան զեկույցում:

Ձեր միջոցառման գրառումներով և նկարներով սոցիալական ցանցերում կիսվելիս օգտագործեք #EpilepsyDay հեշթեգը: Մենք ամեն ինչ կանենք ձեր նյութերն առաջ մղելու և տարածելու համար:

ՔԱՐՈԶԱՐՇԱՎԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄ [1]

Սոցիալական մեդիաները ամբողջ աշխարհում կարևոր դեր են խաղում Էպիլեպսիայի միջազգային օրվա կապակցությամբ մեր ուղերձները հանրությանը հասցնելու գործում:

Երկուշաբթի օրը՝ 2024 թվականի փետրվարի 12-ին, համաշխարհային ջանքեր են գործադրվելու #EpilepsyDay-ը X (նախկինում՝ Twitter) և սոցիալական մեդիայի այլ կայքերում թրենդային դարձնելու համար:

Ինչ էլ որ անեք Էպիլեպսիայի Միջազգային Օրը, եղեք սոցիալական ցանցերի համաշխարհային ջանքերի մի մասը:

facebook.com/intepilepsyday

twitter.com/IBESocialMedia

twitter.com/IlaeWeb

instagram.com/international_epilepsy

instagram.com/ILAE_Epilepsy

linkedin.com/international-bureau-for-epilepsy

linkedin.com/international-league-against-epilepsy

[1]Քարոզարշավի ռեսուրսներն ազատորեն հասանելի են անհատ աջակիցների կամ շահույթ չհետապնդող կազմակերպությունների կողմից օգտագործելու համար: Առևտրային ընկերությունները, ովքեր ցանկանում են օգտագործել քարոզարշավի ռեսուրսները, պետք է կապ հաստատեն մեզ հետ հաստատման համար: Եթե արշավի հետ կապված հարցեր ունեք կամ պատկերների ներբեռնման հետ կապված խնդիրներ ունեք, խնդրում ենք կապվել Մարի Էնիս Օ'Քոնորի՝ Հաղորդակցության բաժնի ղեկավարի հետ՝ communications@ibe-epilepsy.org հասցեով:

Icon and Logo

Download icon

Download Logo

Սոցիալական մեդիայի պատկերներ

Ներբեռնել պատկերների հավաքածու 1. IGAP

Օգտագործեք այս պատկերները՝ IGAP-կապված ինֆորմացիայով սոցիալական հարթակներում կիսվելիս:





Download zip file of images

Արդյո՞ք գիտեիք (Did You Know) դատարկ ձևանմուշ

Անհատականացրեք այս դատարկ ձևանմուշը՝ ավելացնելով Ձեր սեփական «Արդյո՞ք գիտեիք» հաղորդագրությունները՝ ձեր համայնքում և տարածաշրջանում IGAP-ի հետ կապված գործունեությունը խթանելու համար: Ազատորեն ավելացրեք Ձեր պատկերանշանը (լոգո), պատկերները և այլ հարմարեցված պատկերներ:

Edit Template (Canva)

Ներբեռնել պատկերների հավաքածու 2. #MyEpilepsyJourney

Այս դատարկ ձևաթղթերը հասանելի են ներբեռնման համար jpeg և pdf ֆորմատներով:



Download zip file of images

Ներբեռնել պատկերների հավաքածու 3. X (նախկին Twitter)



Download zip file of images

Ներբեռնել պատկերների հավաքածու 4. Facebook & Instagram (քառակուսի)



Download zip file of images

Ներբեռնել պատկերների հավաքածու 5. #MyEpilepsyJourney

Անհատականացրեք այս ձևաթղթերը Twitter-ի, Facebook-ի և Instagram-ի շապիկների համար և տեղադրեք պատկերներ՝ #EpilepsyDay-ի խթանման համար: Դրանք ֆորմատավորված են պահանջվող չափերին համապատասխանելու համար, և խրախուսվում է դրանց անհատականացումը ձեր սեփական հաղորդագրություններով, տարբերանշաններով և այլ տարրերով:



Download zip file of images

Կիսվեք Ձեր անձնական ուղերձով #EpilepsyDay

Ունե՞ք հաղորդագրություն, որով կցանկանայիք կիսվել այս #EpilepsyDay-ին:

Միգուցե՞ խոսքը խոչընդոտների հաղթահարման, սպասելիքների դեմ պայքարի կամ անսպասելի քաջության ու տոկունության հայտնաբերման մասին է:
Կամ գուցե դուք կցանկանայիք օգտագործել այս հնարավորությունը՝ հույսի ուղերձով ոգեշնչելու ուրիշներին իրենց ճանապարհորդության ընթացքում:
Որպես այլընտրանք, դուք կարող եք վիճարկել էպիլեպսիայի վերաբերյալ կարծրատիպերը և կանխակալ պատկերացումները:
Օգտագործեք #MyEpilepsyJourney-ի գունավոր քարտերից մեկը վերևում գտնվող 9-րդ էջում (pdf տարբերակը, եթե տպված է) կամ պարզ տարբերակը էպիլեպսիայի

միջազգային օրվա կապակցությամբ ձեր հաղորդագրությունները սոցիալական մեդիա հարթակներում կիսելու համար:

Դատարկ ձևաթուղթ



Download plain card

Ոգեշնչում եք փնտրու՞մ:

Ստուգեք ստորև ներկայացված առաջարկությունները՝ ձեր երևակայությունը խթանելու համար:

«Ես սովորել եմ…»

«Ես զարգացել եմ…»

«Ես աշխատում եմ…»

«Իմ ցանկությունն է ուրիշներին…»

«Ապագայում հույս ունեմ. . .»

Այլ ռեսուրսներ

Epilepsy Facts & Figures

- Facts and Figures
- Datos y estadísticas sobre la epilepsia
- Epilepsie Fakten und Zahlen
- Faits et statistiques sur l’épilepsie
- Scheda informativa sulla l’epilessia
- Dados sobre a epilepsia
- Činjenice o epilepsiji

IGAP

- WHO Intersectoral Global Action Plan on Epilepsy and Other Neurological Disorders 2022-203
- WHO Position Paper on Optimising Brain Health Across the Lifecourse
- WHO’s Epilepsy Technical Brief
- IGAP Unpacked: A Practical Guide
- Guide En Français
- Guía En Español